զարջրիր և Թիրիքեարտ հայ ու պարսիկ խառն են, իսկ մնացեալները զուտ պարսկաբնակ են։

Ազգաբնակութեան մեծամասնութիւնը կազմում են պարսիկները, յետոյ լօռերը և ապա հայերը, որոնք ամբողջ գաղթականներ են. գաղթել են ըստ աւանդութեան Հին—Ջուղայից, Բլուր, Արցխա, Խոյ գիւղերից և Հայաստանի այլ տեղերից 1606 թուին, Շահ-Աբբասի ձեռքով։ Այժմ ընդամենը՝ 1789 տուն են. 7058 արական, 6392 իգական. ի միասին՝ 13,450 հոգի։ Այդ հայերն իրենց բարքերով, լեզուով, կրօնով տարբերւում էին, ի հարկէ, Փէրիալի բնիկներից, բայց նրանք հետզհետէ, տարիների ընթացքում, ազդւել են շրջապատողներից, ընդօրինակել են նրանց սովորութիւնները, նիստ ու կացը, միանգամայն կերպարանափոխել նոյնիսկ արտաքինը՝ նրանց (պարսիկների) նման են հագնւում, ածելւում և խուզւում (գլուխների գագաթին թողնում են մի փունջ քաքուլ). գրեթէ ոչնչով չեն տարբերւում։ Միակ բանը, որ մնացել է, այդ կանացի տարազն է, կրօնը և մայրենի լեզուն։

Խօսում են շատ մաքուր և պարզ արտասանութեամբ. բարբառը մօտ է Արարատեան բարբառին։

Խարակէրիսիկա (բնոյթագրութիւն, յատկանիշ)։ Փէրիացիք առհասարակ քաջ, տոկուն, աշխատասէր և չարքաշ ժողովուրդ են. բնաւորութեամբ աշխոյժ, հիւրասէր, կրօնամոլ և եկեղեցասէր, իսկ վարք ու բարքով մաքուր և պարզ, բայց և նոյն ժամանակ վերին աստիճանի տգէտ ու նախապաշարուած։

Կազմուածք։ Ընդհանրապէս առողջարար կլիման, հիանալի ջուրը, տեղի դիրքը և մաքուր օդը բնակիչներին շատ լաւ կազմուածք է շնորհել։ Տղամարդիկ քաջառողջ, ամրակազմ, մեծամասնութիւնը բարձրահասակ ու յաղթանդամ են. ունեն բարձր ուսեր, լայն թիկունք, դուրս ընկած և լայն կուրծք, հաստ և ուժեղ բազուկներ ու մատներ, իսկ աչքերը սև և խոշոր են, մազերն նոյնպէս սև։